



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@artashat.am;
artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 92-Ա

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 2-ի հերթական նիստի **օրակարգը՝**

1.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԵՐՍԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ/

1.3. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.4. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑԻ 38 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ

59.87 քմ ընդՀանձնի մաԿերեսՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԻՐԻՆԱ ՆԻԿՈԼԱԵՎՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ ՍՈՍԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

1.5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ /ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ/, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԱՀԻՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

1.6. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՈՒՇԵՂ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՅԳԵՀԻՄՆՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.7. ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.8. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,29 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.9. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,107 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.10. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱԼԱՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.11. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԽՁՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,3211 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.12. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.13. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,61802 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.14. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.15. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.16. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՎՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ/

1.17. ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.18. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ 2 ԵԿԵՂԵՑԻ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,098 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ» ԱՆՀԱՏՈՒՅՑ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.19.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆՆ ԸՆԴՀԱՅՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.20.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ Գ. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՓՈՂՈՑ 59/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.21.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ՓՈՂՈՑ 6/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.22.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ, ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՓՈՂՈՑ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.23.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԶՈՒԼԵՏԱ ՓԱՅԼԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.24.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԻ Մ.ՄԱՇՏՈՅԻ ՓՈՂՈՑ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,05147 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.25.ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՍԽԱԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՅԱԾ՝ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,0155 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ/

1.26. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՆԵՐՍԵՍ ԳԵՂԱՄՅԱՆ/

1.27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Կողմ -22

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒՋԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@artashat.am;
artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 93-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2023 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած հետևյալ փոփոխությունները.

- 1) 11.01.02.51 գործառնական դասակարգման /վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 4891 հոդվածը պակասեցնել 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամով
- 2) 01.01.01.51 գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/ 4232 հոդվածն ավելացնել 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամով
- 3) 01.01.01.51 գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/ 5121 հոդվածը պակասեցնել 3000000 /երեք միլիոն/ ՀՀ դրամով
- 4) 01.01.01.51 գործառնական դասակարգման /կառավարման մարմնի պահպանում/ 5132 հոդվածն ավելացնել 3000000 /երեք միլիոն/ ՀՀ դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -22

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒՋԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@artashat.am;
artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 94-Ն

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Արտաշատ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու կարգը և չափորոշիչները համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի N 35-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -22

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ



ԿԱՐԳ

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՄԵԼՈՒ

1. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող միանվագ սոցիալական աջակցության առավելագույն չափը սահմանվում է 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ: Նույն ընտանիքին մեկ օրացուցային տարվա ընթացքում հատկացվող օգնությունը չի կարող գերազանցել սոցիալական աջակցության առավելագույն չափի 1.5-պատիկի չափը: Արգելվում է սոցիալական աջակցության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող անձանց, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, նրանց ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարին մերձավոր ազգակցությամբ կապված անձանց (ծնող, քույր, եղբայր, երեխա, ամուսին):

2. Միայն պետական բարձրագույն, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում գերազանց առաջադիմությամբ սովորելու դեպքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվում է ուսման վարձի հատկացում՝ ուսման վարձի մինչև 30 տոկոսի չափով: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող անձանց, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարին մերձավոր ազգակցությամբ կապված անձանց (ծնող, քույր, եղբայր, երեխա, ամուսին):

3. Սոցիալական աջակցությունը նույն ընտանիքին կարող է տրամադրվել դիմելու օրվանը նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում առավելագույնը 3 անգամ, բացառապես Արտաշատ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու վերաբերյալ սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքերի:

4. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ (100 ամյակը բոլորած տարեցներին, Հայրենական պատերազմի վետերաններին աջակցելու դեպքեր, ընտանիքում մեկ ծնունդով երեք և ավելի երեխա ծնվելու, դժբախտ պատահարի, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնասի փոխհատուցման, կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքեր) դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ առանց սույն որոշման N2 հավելվածի 2-րդ կետով նախատեսված Հանձնաժողովի նիստի անցկացման, սոցիալական աշխատողի (սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողի) կատարած ուսումնասիրության և գրավոր արձանագրության հիման վրա, Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և որոշման կայացման միջոցով:

5. Սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքերում կարող է տրամադրվել մինչև 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Կ.ՄԿՐՏՅԱՆ



ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Արտաշատ համայնքի (այսուհետ՝ Համայնք) սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված Համայնքի սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը:

2. Համայնքի ղեկավարը ձևավորում է Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող ժամանակավոր գործող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանու երկու անդամ,

2) սոցիալական աշխատողը (հաստիքի առկայության դեպքում, սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողը),

3) համայնքապետարանի աշխատակազմից երեք աշխատող (այն համայնքներում որտեղ առկա չէ սոցիալական աշխատողի հաստիք, ապա համայնքապետարանի աշխատակազմից 4 անդամ):

4. Հանձնաժողովում ընդգրկվում են (ցանկության դեպքում) Համայնքի բնակիչ համարվող շահագրգիռ քաղաքացիական հասարակության երեք ներկայացուցիչներ:

5. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է Համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

7. Սույն Չափորոշիչի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց հետո, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

8. Համայնքի ղեկավարը Հանձնաժողովը ձևավորում է մեկ տարի ժամկետով:

9. Համայնքի ղեկավարը Հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

10. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է համայնքի ղեկավարի կարգադրությամբ՝ նշանակվելու պահից մեկ տարի ժամկետով:

11. Հանձնաժողովի արձանագրային որոշմամբ քարտուղար է նշանակվում Համայնքի սոցիալական աշխատողը (սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում քարտուղար է նշանակվում Հանձնաժողովի այլ անդամ՝ արձանագրային որոշմամբ):

12. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

13. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են եզրակացություններ:

14. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներն անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

2. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15. Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու խնդրանքով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) Համայնքի բնակիչները,

2) Համայնքում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,

3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

16. Դիմումը (Տե՛ս Ձև 2 - ում) ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցին անձամբ կամ լիազորված անձի միջոցով (լիազորագիրը կցվում է դիմումին):

17. Դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով, կցելով Հավելված N2-ի 18-րդ կետում պահանջվող փաստաթղթերը:

18. Դիմումին կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումողի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,

2) դիմումողի սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի բնօրինակը,

3) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին,

4) բժշկասոցիալական փորձաքննական որոշումը, որը փաստում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամության վերաբերյալ կամ հաշմանդամության վկայականը,

5) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (անհրաժեշտության դեպքում),

6) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված միասնական սոցիալական ծառայության կողմից (անհրաժեշտության դեպքում),

7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնոժին աղետի պատճառած վնաս և այլ)։

8) էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումին կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

19. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները պատճենահանում է, դրանց վրա կատարում է գրառում բնօրինակների հետ համապատասխանության մասին և փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմումատուին: Սույն մասը չի տարածվում էլեկտրոնային կարգով ներկայացված դիմումների վրա:

20. Անհրաժեշտության դեպքում վերցվում են փաստաթղթերի (տեղեկանք բնակության վայրից, տարածքային զինկոմիսարիատից, ԲՈՒՀ-ից և այլ վայրերից) բնօրինակները:

21. Դիմումներն ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում, սոցիալական աշխատողը (հաստիքի առկայության դեպքում, սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողը) իրականացնում է հետազոտություն (տնայցի կատարում, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում), լրացնում է ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (տես 2և 1) և ներկայացնում է Հանձնաժողովի քննարկմանը:

22. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել դիմումատուն:

23. Հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա Համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում կամ գրավոր մերժվում է (սոցիալական աջակցության տրամադրման համար Համայնքի ավագանու սահմանած չափորոշիչին անհամապատասխանության, դիմողի կողմից անհրաժեշտ փաստաթղթեր չներկայացնելու, սոցիալական աջակցություն ստանալու համար դիմողի կողմից ոչ հավաստի տեղեկություն ներկայացվելու դեպքերում) սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը:

24. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 օրացուցային օրվա ընթացքում:

3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

25. Դիմումողի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրության նպատակով սոցիալական աշխատողը (հաստիքի առկայության դեպքում, սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողը) իրականացնում է տնայց, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում կարիքների գնահատման թերթիկը (Տե՛ս 2և 1):

26. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:

27. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում Հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

28. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տնայց կատարելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում սոցիալական աշխատողը (հաստիքի առկայության դեպքում, սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողը) ներկայացվում է հանձնաժողովի նախագահին:

29. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

30. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

31. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է Համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:

32. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

4. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

33. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1) նպաստառու ընտանիք,

2) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա,

3) բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք,

4) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք,

5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք,

6) ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող,

7) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք,

8) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք,

9) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք,

10) միայնակ թոշակառու,

11) միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք:

34. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միննույն բնակության վայրում մշտապես բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

**5. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ
ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ**

35. Աջակցություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմումը,
- 2) դիմումողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- 3) դիմումողի սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հասկացնելու մասին տեղեկանքի պատճեն,
- 4) ընտանիքի և նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները,
- 5) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին,
- 6) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև1) լրացվում և ստորագրվում է տնայց կատարած սոցիալական աշխատողի (հաստիքի առկայության դեպքում, սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողի) կողմից,
- 7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնոժին աղետի պատճառած վնաս և այլ):

36. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր անցկացված նիստի համար կազմում է առանձին արձանագրություն:

37. Նիստերի արձանագրությունները համարակալվում են արաբական թվերով: Արձանագրությունների համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Արձանագրությունների էջերը համարակալվում, կարվում և կնքվում են Համայնքի աշխատակազմի կնիքով:

38. Հանձնաժողովի քարտուղարի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ նիստերի արձանագրությունները պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով:

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք

«-----» 20----թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն -----

Բնակության վայր -----

Հեռախոս -----

Ընտանիքի կազմը

Անուն Ազգանուն Հայրանուն	Ազգակցական կապը	Ծննդյան օր, ամիս, տարի

Ընտանիքի իրավիճակը

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	
Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով ապահովվածություն	
Եկամուտներ	
Հազուստով ապահովվածություն	

Մենդով ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	

Լրացուցիչ տեղեկատվություն

Մասնագետի դիտարկումներ

սոցիալական աշխատողի (հաստիքի առկայության դեպքում, սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողի) ստորագրությունը

Դիմումի ձև

ՀՀ.....մարզի
.....համայնքի
ղեկավար.....ին
Բնակության վայր
.....
..... բնակիչ
Անուն, ազգանուն.....
.....ից
Հեռախոս.....
Էլ. փոստ.....

Դ Ի Մ ՈՒ Մ

Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին

Հանդիսանում եմ Արտաշատ համայնքի բնակիչ: Գտնվում եմ սոցիալական ծանր պայմաններում, կյանքի դժվարին իրավիճակում:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝

№	Փաստաթղթի անվանումը	Կցված է (կատարվում է✓ նշում)
1.	Դիմում՝ լրացված սահմանված ձևով	
2.	Անձը հավաստող փաստաթղթի պատճենը	
3.	Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը	
4.	Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին	
5.	Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննական որոշման պատճենը	
6.	Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ ամբուլատոր քարտից քաղվածք	
7.	Սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ տրված սոցիալական ապահովության մարմնի կողմից	
8.	Այլ	

Ստորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:

Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

- ✓ էլեկտրոնային փոստի միջոցով
- ✓ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով
- ✓ պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ _____
(ստորագրություն) (դիմողի անուն, ազգանուն)

_____ 20____ թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@artashat.am;
artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 95-Ա

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 06-ի «Արտաշատ համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 276-Ա որոշմամբ հաստատված 12-րդ հավելվածում 952-րդ տողի լրացմամբ կատարված փոփոխությունը:

2. Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 06-ի «Արտաշատ համայնքի սեփականության 2022 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N 276-Ա որոշմամբ հաստատված 8-րդ հավելվածում Դեղծուտ, Մրգավան, Ոստան բնակավայրերի գույքացուցակներում համապատասխան տողերի լրացմամբ, Արևշատ և Վարդաշեն բնակավայրերի գույքացուցակների ավելացմամբ կատարված փոփոխությունները:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -22

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

M. Babayan

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈՒ

ՄԿՐՏՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՂՈՒԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՅԱՆ



ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
«Արտաշատ» Համայնք

(Կազմակերպության անվանումը)

Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N 12

Ստորագրածանման անվանումը

Համայնքապետարան
(բաժին, տնօրենություն, պահեստ և այլն)

Գույքագրման անցկացման հրամանի
համար և ամսաթիվը

Կարգադրություն թիվ 728

Գույքագրման ավարտելու

Գույքագրումն սկսելու ամսաթիվը

14.09.2022թ.

ամսաթիվը

14.10.2022թ.

Ձև-Գ4
Հավելված 12
ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի
Ավագանու 2022 թվականի 06 դեկտեմբերի
N 276-Ա որոշման
Ավագանու 2023 թվականի 02 հունիսի
N 95-Ա որոշման

Հ/Հ	Կոդ	Անվանումը	Ձեռք բերման միջոցներ	Հաշվառման կան տվյալներ	Փաստացի	Կիճակը	Պաշտոնը	Առաջարկվող Պատասխանա- տու անձը	Սմտորույթ վիճակը
952		Սկսվելու ամսաթիվը 6090 Ն	Խառ	1	1	լավ	ՔՀ բաժնի գլխավոր մասնագետ ՔՀ բաժնի առաջատար մասնագետ	Բաղիշ Սիդորյան Խորեն Հովսեփյան	6-01



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ

Կ.ՄԿՐՏՅԱՆ

Հավելված 8
ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի
Ավագանու 2022 թվականի 06 դեկտեմբերի
N 276-Ա որոշման
Ավագանու 2023 թվականի 02 հունիսի
N 95-Ա որոշման

Ձև Գ-4

ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Դեղձուտ բնակավայր

(կազմակերպության անվանումը)

Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N8
Ենթակայաններ, հորեր և պումպեր և այլն
Բնակավայր

Ստորագրածանան անվանումը

Գույքագրման անցկացման հրամանի
համարը և ամսաթիվը

Կարգադրություն թիվ 728
08.09.2022թ.

Գույքագրումը սկսելու ամսաթիվը

14.09.2022թ. Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 14.10.2022թ.

Խ/Խ	Հիմնական միջոցի անվանումը և համարող բնութագիրը	Խասցեն	Ձեռքբերման տարեթիվը	Առկաությունը		Նշումներ	
				(Խողղմ) Խ վնասում	(Խողղմ) Խ սմբողղումիտ վնասումիշող	միջոցի	Խ մեխաղող
1	2	3	4	5	6	7	8
5	Հակակարկտակայան		2023	1	1	լավ	



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ.ՄԿՐՏՅԱՆ

Հավելված 8
ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի
Ավագանու 2022 թվականի 06 դեկտեմբերի
N 276-Ա որոշման
Ավագանու 2023 թվականի 02 հունիսի
N 95-Ա որոշման

Ձև Գ-4

ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Մրգավան բնակավայր
(կազմակերպության անվանումը)

Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N8
Ենթակայաններ, հորեր և պոմպեր և այլն
Բնակավայր

Ստորաբաժանի անվանումը

Գույքագրման անցկացման հրամանի
համարը և ամսաթիվը

Կարգադրություն թիվ 728
08.09.2022թ.

Գույքագրումը սկսելու ամսաթիվը

14.09.2022թ.

Գույքագրումն ավարտելու ամսաթիվը

14.10.2022թ.

Խ/Խ	Հիմնական միջոցի անվանումը և համարող բնութագիրը	հասցեն	Չեղբերման տարեթիվը	Առկայությունը		Նշումներ	
				(հոդոմժ) վճարում	(հոդոմժ) ի սմգղմոհա՝ գոհոմիշոգ	միոցվի	դր սմհսմսոգ
1	2	3	4	5	6	7	8
8	Հակակարկտակայան		2023	1	1	լսվ	



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ

Կ.ՄԿՐՏՅԱՆ

Հավելված 8
ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի
Ավագանու 2022 թվականի 06 դեկտեմբերի
N 276-Ա որոշման
Ավագանու 2023 թվականի 02 հունիսի
N 95-Ա որոշման

ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Ոստան բնակավայր
(կազմակերպության անվանումը)

Ձև Գ-4

Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N8
Ենթակայաններ, հորեր և պտմալեր և այլն
Բնակավայր

Ստորագրածանուն անվանումը

Գույքագրման անցկացման հրամանի
համարը և ամսաթիվը

Կարգադրություն թիվ 728
08.09.2022թ.

Գույքագրումը սկսելու ամսաթիվը

14.09.2022թ. Գույքագրումն ավարտելու ամսաթիվը **14.10.2022թ.**

Խ/հ	Հիմնական միջոցի անվանումը և համարող բնութագիրը	հասցեն	Ձեռքբերման տարեթիվը	Առկաությունը		Նշումներ	
				(հոդոմժ) վճռատուժ	(հոդոմժ) ի սմզդլոմիտ զոհոմիշոզ	միջոցվի	դր սմեւսմսոզ
1	2	3	4	5	6	7	8
13	Հավակարկտակայան		2023	1	1	լավ	



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԴ

Կ.ՄԿՐՏՅԱՆ

ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Արևշատ բնակավայր
(կազմակերպության տեղանունը)

Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N8
Ենթակայաններ, հորեր և պոմպեր և այլն
Բնակավայր

Ստորագրամասնան անվանումը

Գույքագրման անցկացման հրամանի
համարը և ամսաթիվը

Կարգավորություն թիվ 728
08.09.2022թ.

Գույքագրումը սկսելու ամսաթիվը

14.09.2022թ. Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 14.10.2022թ.

Խ/հ	Հիմնական միջոցի անվանումը և համառոտ բնութագիրը	հասցեն	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Նշումներ	
				(հոդով) վճարող	(հոդով) ի սմբողջությամբ պահպանված	միջոցի	դր սխալներ
1	2	3	4	5	6	7	8
1	Հակակարկտակայան		2023	1	1	լավ	



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԳ **Կ.ՄԿՐՏՅԱՆ**

Ձև Գ-4

ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, Վարդաշեն բնակավայր
(կազմակերպության անվանումը)

Հիմնական միջոցների գույքագրման ցուցակ N8
Ենթակայաններ, հորեր և պոմպեր և այլն
Բնակավայր

Ստորաբաժանի անվանումը

Գույքագրման անցկացման հրամանի
համարը և ամսաթիվը

Գարգարություն թիվ 728
08.09.2022թ.

Գույքագրումը սկսելու ամսաթիվը

14.09.2022թ. Գույքագրումն ավարտելու ամսաթիվը 14.10.2022թ.

h/h	Հիմնական միջոցի անվանումը և համառոտ բնութագիրը	հասցեն	Ձեռքբերման տարեթիվը	Անկախությունը		Նշումներ	
				(հոդոմձ) վճռատոմֆ	(հոդոմձ) ի սմդղլոմիտ կոհոմիշոպ	միջոցվի	դր սմեւսմեւոգ
1	2	3	4	5	6	7	8
1	Հակակարկտակայան		2023	1	1	լավ	



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Կ.ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@artashat.am;
artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 96-Ա

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑԻ 38
ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 59.87 ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԻՐԻՆԱ ՆԻԿՈԼԱԵՎՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՎ
ՀԵՐՄԻՆԵ ՍՈՍԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Արտաշատի քաղաքային սովետի գործկոմի 03.03.1981 թվականի N 2 որոշմամբ Սոսիկ Հակոբ Հակոբյանի (մահվան վկայական՝ 30.01.2020 թվական ԲԱ 216977) 4 (չորս) անձից բաղկացած ընտանիքին է հատկացվել Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Նար-Դոսի փողոցի 38 բնակելի շենքի 11 հասցեում գտնվող բնակարանը: Ներկայումս այդ բնակարանում հաշվառված են, բնակվում և գույքին փաստացի տիրապետում, օգտագործում և կառավարում են Իրինա Նիկոլաննա Հակոբյանը և Հերմինե Սոսի Հակոբյանը: Բնակարանների անհատույց սեփականաշնորհման գործընթացին ընտանիքը չի մասնակցել, ինչի հետևանքով Նար-Դոսի փողոցի 38 բնակելի շենքի 11 հասցեում գտնվող 59.87 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը մինչև 01.01.2007 թվականին գործող «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» օրենքի 29-րդ հոդվածի հիման վրա, որպես սեփականություն, հանձնվել է Արտաշատ համայնքին՝ օրենքով սահմանված կարգով տնօրինելու նպատակով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 102-րդ հոդվածով և ուսումնասիրելով Իրինա Հակոբյանի 10.05.2023 թվականի N Բ-5819 դիմումը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Նար-Դոսի փողոցի 38 բնակելի շենքի 11 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող, 59.87 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (կադաստրային ծածկագիրը՝ 03-001-0028-0103-

001-011) որպես համատեղ սեփականություն նվիրել՝ Իրինա Նիկոլաննա Հակոբյանին (ծնված՝ 07.11.1947 թվական, նույնականացման քարտ՝ 003882727) և Հերմինե Սոսիկի Հակոբյանին (ծնված՝ 15.07.1978 թվական, նույնականացման քարտ՝ 005569124):

2. Նվիրատվության գործընթացը կազմակերպել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում դիմումատուին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -22

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՂՈԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@artashat.am;
artashatmeria@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 97-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ
(ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ), ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 28-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով հանրային լսման արդյունքը՝ Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխել (անվանակոչել) Դավիթ Ռաֆայելյանի անվամբ՝ «Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Դավիթ Ռաֆայելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
- Հաստատել «Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Դավիթ Ռաֆայելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -22

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԱՏՅԱՆ ԱՆԻ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՐՄՈՆ

ԲԱԲԱՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐԱՔՍՅԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԳԱՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՈՒ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ՆԻԿՈԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ

ՈՍԿԱՆՅԱՆ ՍՈՖԻԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՍԱՅԱԴՅԱՆ ՍՅՈՒՋԱՆՆԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ



ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

կազմված է 02.06.2023թ.
բաղկացած է 10 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ N 97-Ա
ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ՝

Կ. ՄԿՐՏՁՅԱՆ

„ 02 „ 06 „ 2023թ.



տպված է ընդամենը 2 օրինակ
օրինակ՝ -----

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԱՐՏԱՇԱՏԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
30.10.2009թ.
ԳՐԱՆՑՄԱՆ N 52.210.01623
ՀՎՀՀ 04212012

15.12.2022թ. գրանց. կանոնադրության

թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից

----- 2023թ.

աշխատակից՝ -----

«ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԴԱՎԻԹ
ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

/ նոր խմբագրություն /

ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք 2023թ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Դավիթ Ռաֆայելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է:

Հաստատությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյանի գյուղապետի 20.10.2009թ. թիվ 69 և Շահումյանի գյուղական համայնքի ավագանու 20.10.2009թ. թիվ 1 որոշումների համաձայն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան գյուղի արվեստի դպրոց բյուջետային հիմնարկի /գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից՝ 11.08.1999թ., գրանցման թիվ՝ 52.0152, վկայական՝ Բ.004658, գտնվելու վայրը՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Շահումյան/ վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը փոխանցման ակտին համապատասխան:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Հաստատության գտնվելու վայրն է՝

ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, գյուղ Շահումյան, ինդեքս 0732:

4. Հաստատության անվանումն է՝

ա) հայերեն լրիվ՝ «Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Դավիթ Ռաֆայելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

բ) հայերեն կրճատ՝ «Արտաշատ համայնքի Շահումյան գյուղի Դավիթ Ռաֆայելյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ

5. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

8. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

9. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան և նպատակները սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների զեղազիտական, ֆիզիկական զարգացումը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը և բնապահպանական ու կիրառական գիտելիքների ձևավորումը:

12. Հաստատությունն ապահովում է դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը և վարքի շեղումների կանխարգելումը:

13. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների գուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Հաստատության հիմնական խնդիրներն են՝

ա) մինչև 18 տարեկան սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, զեղազիտական, բնապահպանական և ֆիզիկական դաստիարակության ապահովումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները:

բ) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

գ) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը, արդյունավետ պայմանների ապահովումը:

դ) դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների ու հմտությունների և ձեռներեցության զարգացումը,

ե) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

15. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

ա) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում,

բ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,

գ) ճամփարների կազմակերպում,

դ) հրաձգարանների գործունեություն, սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն,

ե) ներկայացումների, համերգների կազմակերպում և կրթական գործունեության այլ տեսակներ:

Հաստատությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատություններն իրենց ուղղություններին համապատասխան իրականացնում են կրթադաստիարակչական ծրագրեր՝ համաձայն իրենց կանոնադրության: Ըստ կրթադաստիարակչական ծրագրերի՝ սահմանվում են հաստատությունների հետևյալ տեսակները՝

- ա) մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,
- բ) գեղագիտական կենտրոն,
- գ) երաժշտական, նկարչական, գեղարվեստի, կերպարվեստի դպրոց ու կենտրոն և այլ հաստատություններ,
- դ) մարզադպրոց,
- ե) առողջարարական կենտրոն,
- զ) հոգեբանական կենտրոն,
- է) պատանի տեխնիկների (բնասերների, տուրիստական) կայան,
- ը) ակումբ,
- թ) ճամբար,
- ժ) լրացուցիչ կրթություն և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ հաստատություններ:

16.1 Հաստատությունն իր տեսակով արվեստի դպրոց է:

17. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և ժամանակացույցին համապատասխան:

18. Հաստատությունը մշակում է գործունեության իր ծրագրերը՝ հաշվի առնելով սաների հետաքրքրություններն ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

19. Սաներն ընդգրկվում են հաստատության նույն կամ տարբեր տարիքի միավորումներում (խմբակ, ստուդիա, ակումբ, համույթ, թատրոն, մարզական խումբ և այլն): Յուրաքանչյուր սան իրավունք ունի ընդգրկվելու տարբեր միավորումներում:

20. Բոլոր միավորումներում պարապմունքները պետք է լինեն շաբաթական 2-3 անգամ, ընդ որում, յուրաքանչյուր միավորումում պետք է ընդգրկվի առնվազն 6-12 երեխա, փոքր համակազմ ունեցող Հաստատությունում միավորումը կարող է բաղկացած լինել՝ սկսած 3 սովորողից:

21. Հաստատությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից և տևում է 34-40 շաբաթ: Հաստատությունում սահմանվում է վեցօրյա ուսումնական շաբաթ՝ ըստ ուսումնական պլանի:

IV. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

23. Հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

24. Հաստատության կրթադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ:

Մանկավարժական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում՝

ա) հաստատության կանոնադրության վերաբերյալ.

բ) հաստատության գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի, առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ.

գ) ուսումնական պլանների ու ծրագրերի վերաբերյալ՝ ելնելով հաստատության հիմնական խնդիրներից, նպատակներից, կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից.

դ) լրացուցիչ կրթական ծրագրերի և առաջավոր փորձի տարածման վերաբերյալ.

ե) մանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ:

Հաստատության մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են մանկավարժական աշխատողները: Մանկավարժական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողական համայնքի ներկայացուցիչներ:

Մանկավարժական խորհրդի նիստը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ:

Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Մանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է հաստատության տնօրենը:

25. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

26. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) հաստատության հիմնադրումը.

բ) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) հաստատության օրինակելի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

դ) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

27. Լիազորված պետական մարմինն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

28. Լիազորված պետական մարմինը՝

ա) հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

զ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) վերահսկողություն է իրականացնում հաստատության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը (եթե հաստատությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին).

ը) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ.

թ) հաստատում է հաստատության տարեկան ծախսերի նախահաշիվը:

29. Հաստատության տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի՝ պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

30. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

բ) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

ե) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

ը) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար:

Ժա) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ:

Ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը:

Ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը:

Ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

31. Տնօրենի բացակայության դեպքում, հիմնադրի գրավոր որոշման (կարգադրության) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

32. Հաստատության տնօրենի՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը՝/ուսմասվար/

ա) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար:

բ) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը:

գ) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ:

դ) ընդհանրացնում և տարածում է լավագույն խմբակավարների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:

ե) ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը:

զ) կազմակերպում է սովորողների հանգիստը և ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու համար:

33. Հաստատության տնտեսվարը՝

ա) պատասխանատու է հաստատության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքներին՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար:

բ) միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

34. Խմբակի ղեկավարը (խմբակավարը)՝

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում իր խմբակի սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս խմբակավարների հետ:

բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը:

զ) իրականացնում է խմբակի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ:

դ) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ:

ե) արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

35. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

36. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

37. Հիմնադիրը՝ սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

